մանակ իսկ որպիսին է Ալաշկերտի հիւսիսային սահմանին կից Կապոյտ և Թէքէ-բինէ լեռնահովիտներն Ալաշկերտի ժողովրդեան՝ իսկ Ջամշա և Սինեկ Գարաքիլիսէի, Ալադաղ և ծաղկոտն գաւառի և Բագուանի ժողովրդեան համար։

Այս մեծ լեռնահովիտներն դրիւք բնական անմատչելի բերդեր լինելով՝ երբեմն ոչ միայն Բագրեւանդայ՝ այլ ամբողջ Արարատեան նահանգի ժողովրդեան համար ապաստանարան եղած են. ոմանց շուրջն 2—3 քիլոմէթր տարածութեամբ վայր պարսպուած լինելով ցոյց կտան թէ 50,000 կամ 100,000 ընտանիք պատսպարած են։

Իսկ մանր բերդերէ նշանաւորներն են—Վաղարշակերտի բերդ, որ Թոփրաղ-գալէի մէջ բլուրի մի գագաթն շինած է. Աբուզեթայ բերդ՝ Խալեազի յարեւելս. Բիւրապատի բերդ՝ Շեռեանայ գլխու Բիւրապատ գիւղի մօտ բլուրի մի վերայ. Աւեր բերդ՝ Հանդէպ Խաստուր գիւղի. Աւեր բերդ՝ մերձ Կեառէ լեռան. Խամուրայ բերդ, ի ձախ Եփրատայ. ծաղկոտն գաւառին մէջ երկու մեծ և փոքր բլուրներու վերայ հաստատուած Աղ-դէվա կոչուած բերդօրայք. Շոշկայ բերդ՝ ծաղկոտն գաւառի բարձրն, ծաղկանց լեռներու կողերու վերայ մի բարձր և սարսափ ազդող ահռելի ժայռի մէջ շինուած է. Բաղկայ բերդ, որ հանդէպ Շոշկայ հիւսիսային լեռնաշղթային, Սինեկայ հարաւային կողերուն վերայ շինուած է, ունի այլ և այլ նեղքնուղիներ, մէջը տեսնուած է խաղողի որթի արմատ, որ այժմ չաճիր. տեսնուած են օրօրոցաձև տապաններու վերայ մարդու պատկերներ. Վարդանաբերդ՝ Գայլատոյ ծովակի կղզեակին մէջ. Ախտայ լեռան մօտ կան երկու բերդօրայք, երեք հատ և Մերկեզերի